



AMERICAN UNIVERSITY OF ARMENIA  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՄԵՐԻԿԵԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Ապրիլ 5, 1995

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա.

Ծայրագոյն Պատրիարք եւ կաթողիկոս Ամենայն Հայոց  
Ս. Էջմիածին

Վեհափառ Տէր,

Հայրենիքէն ներս և ի սփիւռոս աշխարհի մեր ժողովուրդը դարերէ ի վեր առաջին անգամ ըլլալով ոչ միայն ականատեսը կ'ըլլայ պատմութեան թաւալքին, այլ գործօն մասնակիցը այդ պատմութեան դարբնումին և հունաւորումին:

Անցնող մի քանի տարիներուն ընթացքին, իրարյաջորդ և աննախընթաց իրադարձութիւններ կու գային պատմութեան լուսանցքային ներկայութենէն մեր հայրենիքն ու ժողովուրդը նետելու համաշխարհային քաղաքականութեան և ընկերային յարաբերութիւններու թատերաբեմը ուր կը հաւատանք որ պիտի ցուցաբերենք մեր գրական ներկայութիւնը և հայավայել նպաստը:

21-րդ դարու շեմին կանգնած և բազմապիսի մարտահրաւերներով յանախած մեր ժողովուրդի երազներով է սալարկուած Ձեր ուղին, և ցանկուած անոր կարօտներովն ու ակնկալութիւններովը:

Ձեզ կը մաղթեմ արեւշատ ու քաջառողջ երկար տարիներ Ձեր սրբազան առաքելութեան մեջ:

Որդիական յարգանք,

Մատչելով ի համբոյր Ձերդ Օծեալ Ս. Աջոյն

Միքայել Բուշաքնեան  
Պրոռեկտոր